Տ. ՄԱԿԱՐ ԱԲԵՂԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(26 դեկտեմբերի, շաբաթ, 1998 թ.)

«Որ քոյին յօժարական համբերութեամբ զքարկոծումն յանձն առեր, շնորհեալ քեզ յԱստուծոյ լինել չարչարակից Քրիստոսի. զի եւ մեզ ուսուցես փառաւորել Սուրբ զԵրրորդութիւնն»:

(Շարական)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Դու, որ քո հոժար կամքով, հոժարակամությամբ և համբերությամբ հանձն առիր քարկոծվել, նահատակվել վասն Հիսուսի, որով և քո անձը ընծայեցիր, նվիրեցիր, շնորհեցիր Աստուծո, դարձար չարչարանակից Քրիստոսի, մեզ ցույց տվեցիր ձևը, կերպը, մեզ ցույց տվեցիր, թե ինչպես կարելի է և պետք է փառավորել Ամենասուրբ Երրորդությանը:

Սիրելի հավատացյալներ, այսպես է բնութագրում շարականագիր վարդապետը Սուրբ Ստեփաննոսի անձնավորությունը: Այսօր մեր եկեղեցին տոնակատարում է հիշատակը Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի տիեզերասփյուռ վարդապետության համար առաջին նահատակի, որ է Ս. Ստեփաննոս նախասարկավագը, և որի մասին կարդում ենք «Գործք Առաքելոցում»: Գիտենք, թե ինչպես նա իր կյանքը ընծայաբերեց վասն Հիսուսի՝ քարկոծվեց, չարչարվեց, նահատակվեց և դրանով իսկ վկան հանդիսացավ Քրիստոսի վարդապետության ճշմարտության:

Ս. Ստեփաննոսի անձը յուրաքանչյուր քրիստոնյայի հավատքի մեծացման, փառավորման համար շատ կարևոր նշանակություն ունի: Մենք հաճախ հիշում ենք Սրբին՝ հայցելով նրա բարեխոսությունը մեր մեղքերի թողության և մեր մաքրագործման համար: Այսօր, երբ նրա հիշատակի օրն է, մենք պարտավոր ենք մեր մտքերում մի քանի կարևոր գաղափարների շուրջ խորհել, որոնք առնչվում են Ս. Ստեփաննոսի նահատակության, ինչպես նաև այն ուժի հետ, որը նրան առաջնորդեց դեպի կյանքի ընծայաբերում: Որքան հրաշալի է, երբ մեր եկեղեցու հայրերը, հատկապես այսօր, Ս. Ավետարանի ընթերցումը նշանակել են Հովհաննես Ավետարանչի ԺԲ գլխի 24-րդ համարից, որտեղ խոսվում է ցորենի հատիկի մասին ու ասվում, որ եթե այդ ցորենի հատիկը միմիայն ինքն իրենով ապրեր, ոչինչ կտար, սակայն պայման էր, որ այդ հատիկը ինքնազոհաբերվեր, ընկներ հողի մեջ և ծլարձակեր մեկի փոխարեն տասը, տասի փոխարեն հարյուր, հարյուրի փոխարեն հազար: Այսպես էր և Ս. Ստեփաննոսը: Նա իր գիտակից զոհաբերումով վկան հանդիսացավ

Քրիստոսի քարոզությունների ճշմարտության: Ուրեմն, խոսելով Ստեփաննոսի մասին, նախ և առաջ մեր մտքում հայտնվում է նվիրվածության գաղափարը: Յուրաքանչյուրս երբ լծվում ենք մի գործի. պետք է քաջ գիտակցենք. որ այդ գործի հաջողությունն ու փառավորումը մեզանից պահանջում է ամենից առաջ նվիրում:

Նվիրվածությամբ է. որ կարող ենք արդյունքի հասնել: Այն անձը. ով իր աշխատանքը չի սիրում. չի կարող հաջողություն ունենալ. այն աշակերտը. ով դպրոց հաճախել չի սիրում, չի սիրում ուսանել. չի կարող համալսարան ավարտել: Պաշտոնյան, որ իր գործի նկատմամբ անտարբեր է. չի կարող օգուտ տալ ժողովրդին: Ուրեմն, նվիրվածությունը յուրաքանչյուր գործում մեծագույն գրավականն է այդ գործի հաջողության: Ահավասիկ, Ս. Ստեփաննոս սարկավագը, հրաշալի կերպով գիտակցելով այս, ինքն իրեն նվիրաբերեց Քրիստոսի լույս Ավետարանի տարածմանը: Նվիրագործմանը վստահաբար հաջորդում է մի այլ կարևոր գաղափար, որ է ծառայության ոգին: Իր գործին նվիրված մարդը անպայմանորեն ծառայասեր կլինի: Եթե չաշխատենք ու չծառայենք, վստահաբար ոչնչի չենք կարող հասնել:

Ահավասիկ, Ստեփաննոս սարկավագը ծառան հանդիսացավ Քրիստոսի Ավետարանի, նա ծառայեց. ինչպես իր Տերը, և ինչպես առաքյալն է ասում, խոնարհեցրեց իր անձը, մեր Տիրոջ նման ունայնացրեց իր անձը՝ մեզ հավասարվելու համար: Ծառայությունը ուրիշ բան չէ, եթե ոչ Աստծո փառքի ի հայտ բերումը մեր անձերի միջից: Ս. Իրենիոս Հայրապետն ասում է՝ Աստծո փառքը կենդանի մարդն է: Ուրեմն, մարդու աշխատանքը, ծառայությունը Աստծո փառքի ներկայությունն է մեր մեջ: Նվիրվածությունը, ծառայությունը մարդուն տանում են դեպի ամենաբարձր և ճշմարիտ գաղափարը, որ է վկայությունը մեր գործերի, մեր առաքելության ճշմարտության: Մենք մեր եկեղեցու Սրբերին, նահատակներին կոչում ենք մարտիրոսներ, վկաներ: Իրենք իրենց անձերով, իրենց վարքով, իրենց նահատակությամբ վկաներն են հանդիսանում Քրիստոսի ճշմարիտ վարդապետության:

Սիրելի հավատացյալներ, ահավասիկ՝ նվիրաբերում, ծառայություն և վկայություն, երեք կարևոր զենքեր այսօրվա յուրաքանչյուր հավատավոր անհատի համար: Այսօր նշում ենք տոնը սարկավագների, և այս առիթով շնորհավորում եմ մեր սարկավագ եղբայրներին՝ նրանց համար երկնավոր Տիրոջից հայցելով ծառայության գիտակցություն, նվիրվածության ոգի, բարի և մաքրամաքուր վարք, որպեսզի իրենց այդ կենցաղով վկաները հանդիսանան մեր Մայր եկեղեցու ճշմարտության: Մեզանից յուրաքանչյուրի կյանքի ապրելու ձևով է նաև պայմանավորված հավատացյալների թվի մեծությունը:

Սիրելի սարկավագ եղբայրներ, թող Տերը ձեզ ուժ, կամք և առողջություն պարգևի, որպեսզի դուք իրապես, ինչպես Ստեփաննոս սարկավագը, վկաները հանդիսանաք մեր առաքելահաստատ Մայր եկեղեցու:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ամէն»: